Հավելված

Հայաստանի Հանրապետության
հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝

«24» նոյեմբերի 2025թ.

թիվ 58-Լ հրամանի

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (այսուհետ՝ նաև ունկնդիրներ) 2026 թվականի կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամանակացույցը, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործմանը քրեական օրենսդրության՝ այդ թվում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցերի, կոռուպցիոն հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի, հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացման (փողերի լվացում) հանցագործության որակման և քննության մեթոդիկայի, գույքի բռնագանձման, կոռուպցիոն հանցատեսակների քրեագիտական տակտիկայի տեսական ու պրակտիկ գիտելիքների ամրապնդմանը և կատարելագործմանը, հաշվապահական հաշվառման կամ իրավաբանական անձի կարգավիճակը և գործունեությունը կարգավորող ոլորտների ուսումնասիրությանը, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտերի, վերաբերելի նախադեպային որոշումների ներկայացմանը և քննարկմանը:

3. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով:

4. Ուսումնառության տևողությունը 2 շաբաթ է՝ 60 ակադեմիական ժամ ծավալով:

5. Վերապատրաստումն իրականացվելու է 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին:

2. Դասավանդվող առարկայական կուրսերի (դասընթացների) ցանկ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	IAC-001-26	ՀՀ քրեական իրավունք	**20**
2.	IAC-002-26	ՀՀ քրեական դատավարություն	**20**
3.	IAC-003-26	Գույքի բռնագանձման և փողերի լվացման ոլորտների օրենսդրություն	**6**
4.	IAC-004-26	Հաշվապահական հաշվառման կամ իրավաբանական անձի կարգավիճակը և գործունեությունը կարգավորող ոլորտներ	**5**
5.	IAC-005-26	Քրեագիտություն	**5**
6.	IAC-006-26	Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտեր, վերաբերելի նախադեպային որոշումներ	**4**

1. IAC-001-26. ՀՀ քրեական իրավունք.

Դասընթացի նպատակն է ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց պարզաբանել ՀՀ քրեական օրենսգրքի արդի հարցերը: Գործնական գիտելիքներ տրամադրել քրեական իրավունքի նոր մոտեցումների, քրեական իրավունքի արդի այլ խնդիրների, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վերաբերյալ և դրանք պատշաճ կենսագործելու կարողություններ ու հմտություններ ձևավորել: Դասընթացը պայմանավորված է քրեական իրավունքի ոլորտում իրականացված և իրականացվող բարեփոխումների, քրեական օրենսգրքի նորմերի գիտական վերլուծության ու կիրառման արդյունքում բացահայտած թերությունները հաղթահարելու, քրեական իրավունքի տեսության ու օրենսդրության ժամանակակից միտումներին համահունչ հայեցակարգային նոր կառուցակարգերի ու ինստիտուտների, վիճահարույց հարցերի շուրջ ՄԻԵԴ, ՀՀ Վճռաբեկ դատարանի ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ: Դասընթացը ներառում է նաև կոռուպցիոն հանցագործությունների առանձին տեսակների որակման առանձնահատկությունները:

Դասընթացը ներառում է՝

- հատուկ սուբյեկտի ընդհանուր բնութագիրը, պաշտոնատար անձի, առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողի հասկացությունը,

- սխալը և դրա քրեաիրավական նշանակությունը,

- քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը,

- իրավաբանական անձի քրեական պատասխանատվության ընդհանուր պայմանները,

- հանցակցությամբ կատարվող հանցագործությունների որակման հիմնախնդիրները և հանցակցությունը հատուկ սուբյեկտի կողմից կատարվող հանցագործություններում,

- քրեաիրավական նորմերի մրցակցության (բովանդակային և ժամանակային (տեմպորալ)) դեպքում հանցագործությունների որակման հիմնախնդիրները,

- բլանկետային նորմերով և արժեքավորվող հատկանիշներով նկարագրված հանցագործությունների որակման առանձնահատկությունները,

- չավարտված հանցանքի և հանցագործությունից կամովին հրաժարվելու դեպքերում արարքների որակման հիմնախնդիրները,

- հանցագործությունների բազմակիության դեպքում հանցավոր արարքների որակման և եզակի բարդ հանցագործություններից դրանց սահմանազատման հիմնախնդիրները,

- ընտրակաշառք ստանալը, ընտրակաշառք տալը, ընտրակաշառքի միջնորդությունը,

- հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը, Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված՝ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից չկատարելը կամ հանրաքվեի քարոզչության ծախսերը հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամից չկատարելը կամ հայտարարագրման ենթակա տվյալները չհայտարարագրելը կամ հայտարարագիր չներկայացնելը,

- կուսակցության օգտին խոշոր չափերով ապօրինի նվիրատվություն ներգրավելը, կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված չափը չգերազանցելու արգելքը կամ օրենքով չթույլատրված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը խոշոր չափերով շրջանցելը,

- մասնավոր ոլորտում կաշառք ստանալը, մասնավոր ոլորտում կաշառք տալը,

- ՀՀ կամ այլ պետության մարզիկի, մրցավարի, թիմի ղեկավարի, մարզչի, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցի կամ դրա կազմակերպչի, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցի կամ դրա կազմակերպչի կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամի կողմից կաշառք ստանալը, ՀՀ կամ այլ պետության մարզիկին, մրցավարին, թիմի ղեկավարին, մարզչին, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցի կամ դրա կազմակերպչին, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցին կամ դրա կազմակերպչին կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամին կաշառք տալը,

- ծառայողական կամ մասնագիտական պարտականությունները կատարելու համար ապօրինի վարձատրություն ստանալը կամ պահանջելը, մասնավոր ոլորտում

ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը,

- փողերի լվացումը,
- ապօրինի հարստանալը,
- պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելը, պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու նպատակով ապօրինի վարձատրություն տալը,
- կաշառք ստանալը, կաշառք տալը, կաշառքի միջնորդությունը,
- կաշառք ստանալու, կաշառքի միջնորդության կամ իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով օգտագործելու պատրվակով գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալը,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելը, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելը կամ հայտարարագիր չներկայացնելը,
- պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը, պաշտոնատար անձի կողմից ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը,
- պաշտոնեական կեղծիքը,
- դատավարության մասնակիցներին՝ իրենց լիազորությունների հետ կապված կաշառք տալը, դատավարության մասնակիցների կողմից իրենց լիազորությունների հետ կապված կաշառք ստանալը,
- ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը, քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելը, ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը,
- իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը,
- արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը միջամտելը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,
- ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործումը,
- խարդախությունը, վստահված գույքը հափշտակելը, շորթումը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,
- արժեթղթերի կամ կրիպտոակտիվների շուկայում գնային չարաշահումը, ֆինանսական բուրգ ստեղծելը, կազմակերպելը կամ ղեկավարելը, հակամրցակցային գործունեությունը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

- կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիան,
- քրեական իրավունքի ոլորտում ՄԻԵԿ-ով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումներն ու ՀՀ նկատմամբ դրանց կիրառման հարցերը,
- քրեական իրավունքի ոլորտում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները:

2. IAC-002-26. ՀՀ քրեական դատավարություն.

Դասընթացի նպատակն է ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի արդի հարցերը: Գործնական գիտելիքներ տրամադրել վարույթի մասնակիցների, դատավարական հարկադրանքի միջոցների, քննչական գործողությունների, օպերատիվ-հետախուզական գործունեության առանձնահատկությունների, ապացույցների և ապացուցման գործընթացի խնդիրների, իրավակիրառ պրակտիկայում դրանց կիրառելիության և դրանց ժամանակ առաջացող խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների համադրելիության, վերաբերելիության և դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու ուղղությամբ:

Դասընթացը ներառում է՝
- վարույթի հանրային մասնակիցները, նրանց լիազորություններն ու փոխհարաբերությունները,
- վարույթի մասնավոր մասնակիցները, նրանց լիազորությունները, իրավունքներն ու պարտականությունները,
- վարույթին օժանդակող անձինք, նրանց իրավունքներն ու պարտականությունները,
- քրեական հետապնդումը բացառող հանգամանքները,
- քրեական վարույթների միացումը և անջատումը,
- քրեական վարույթի կարճման հիմքերը,
- մինչդատական վարույթի ընդհանուր պայմանները,
- հարկադրանքի միջոցները,
- ձերբակալման հասկացությունը, ձերբակալման տեսակները, հիմքերն ու ժամկետները,
- խափանման միջոցների տեսակները, խափանման միջոցների կիրառման իրավաչափությունը,
- կալանքը՝ որպես խափանման միջոց, իրավաչափության առանձնահատկությունները, ժամկետները,
- տնային կալանք, վարչական հսկողություն,
- գրավը,
- գույքի արգելադրում,
- քրեական վարույթ նախաձեռնելու կարգը, քրեական վարույթ չնախաձեռնելը,
- քրեական վարույթի ամրագրումը,

- օպերատիվ-հետախուզական գործունեության հիմնախնդիրները, նախաքննության և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների համագործակցությունը,

- քննչական գործողությունների տեսակները, կատարման հիմքերը, կատարման կարգն ու մասնակիցները,

- քննչական գործողությունների կատարման ընթացքում ծագող գործնական հիմնահարցերը և նախաքննության ընթացքում քննիչների կողմից թույլ տրվող խախտումները,

- առանձին քննչական գործողությունների կատարման դատավարական և քրեագիտական առանձնահատկությունները,

- գաղտնի քննչական գործողությունների տեսակները, կատարման հիմքերը, կատարման կարգը և մասնակիցները,

- ապացույցի հասկացությունը, ապացույցների թույլատրելիությունը և վերաբերելիությունը, պատշաճ ապացուցումը և ապացույցների տեսակները,

- ապացույցների և ապացուցման գործընթացի խնդիրները, օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքներն ապացուցման գործընթացում օգտագործելու իրավական կարգավորման խնդիրները, ապացույցների թույլատրելիության հիմնախնդիրները,

- էլեկտրոնային ապացույցների կիրառման հիմնախնդիրները քրեական դատավարությունում,

- հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) հիմնախնդիրները քրեական դատավարությունում

- տեսակապի միջոցով վկայի և տուժողի հարցաքննության առանձնահատկությունները,

- անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդումը հարուցելու հիմքը և կարգը: Մեղադրանք ներկայացնելու էությունը և դատավարական կարգը,

- հանրային քրեական հետապնդման ժամկետները և դրանք կասեցնելու հիմքերը,

- քրեական վարույթներով (գործերով) մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգի առանձնահատկությունները,

- նախաքննության ավարտը,

- մինչդատական վարույթի դատական երաշխիքները,

- հանրային մասնակիցների վարույթային ակտերի (մինչդատական ակտերի) իրավաչափության դատական երաշխիքները,

- ՀՀ քրեական դատավարության մինչդատական վարույթին վերաբերող առանձին ինստիտուտների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և դրանց կիրառման հիմնահարցերը,

- համագործակցության վարույթը, դրա նպատակը, կիրառելու հիմքը, ընդհանուր պայմանները,

- համաձայնեցման վարույթը, համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթը,

- մեղադրյալի բացակայությամբ իրականացվող վարույթի առանձնահատկությունները,
- ցուցմունքի դատական դեպոնացումը,
- իրավաբանական անձի վերաբերյալ վարույթը,
- արագացված վարույթը,
- օտարերկրյա պետություններին քրեական վարույթներով իրավական օգնություն ցույց տալու մասին հարցումների կազմման առանձնահատկությունները:

3. IAC-003-26. Գույքի բռնագանձման և փողերի լվացման ոլորտների օրենսդրություն.

Դասընթացի նպատակն է ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց պարզաբանել գույքի բռնագանձման և փողերի լվացման ոլորտների արդի հարցերը: Գործնական գիտելիքներ տրամադրել փողերի լվացման ենթադրյալ հանցագործության դեպքերով մինչդատական վարույթի առանձնահատկությունների, փողերի լվացման ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ վարույթներով քրեական օրենքի ճիշտ կիրառման, քրեական վարույթի ֆինանսական քննության իրականացման, փողերի լվացման գործերի հայտնաբերման և նախաքննության, այդ թվում՝ զուգահեռ ֆինանսական քննության իրականացման, Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման, ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման ռիսկերի ազգային գնահատման մեթոդաբանության, Ֆինանսական դիտարկումների կենտրոնի հետ համագործակցության, ՖԴԿ-ի տրամադրած տեղեկությունների օգտագործման և համագործակցության ձևաչափի, փողերի լվացման դեմ պայքարի իրավական համակարգի և դրա շրջանակներում Միջազգային իրավունքի և ձևավորված դատական պրակտիկայի վերաբերյալ, միջազգային համագործակցությունը և փոխադարձ իրավական օգնությունը կատարելագործելու, այդ գործերով զուգահեռ ֆինանսական քննություն իրականացնելու, ինչպես նաև ակտիվների վերականգնման, մեղադրական դատավճռի հիման վրա կամ այլ մեխանիզմների օգտագործմամբ հանցավոր գույքի բռնագրավման համար:

Դասընթացը ներառում է՝

- նախորդող հանցագործությունը, կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը,
- փողերի լվացման ենթադրյալ հանցագործության դեպքերով մինչդատական վարույթի առանձնահատկությունները, քրեական վարույթի նախաձեռնումը և քննության պլանավորումը, ինչպես նաև ֆինանսական քննության իրականացումը,
- փողերի լվացման դեմ պայքարի իրավական համակարգը. Միջազգային իրավունքը և դատական պրակտիկան, ներպետական իրավունքը և դատական պրակտիկան,
- Ֆինանսական դիտարկումների կենտրոնի և իրավապահ մարմինների համագործակցությունը. ֆինանսական հետախուզության մարմինների դերը և

գործառույթները, ՖԴԿ-ի տրամադրած տեղեկությունների օգտագործումը և համագործակցության ձևաչափը,

- ոչ պաշտոնական համագործակցության շրջանակներում ֆինանսական հետախուզության տվյալների և վերահսկողական, իրավապահ կամ այլ բնույթի տեղեկություններ փոխանակելու ընթացակարգը,

- փողերի լվացման ենթադրյալ հանցագործությունների դեպքերով միջազգային համագործակցությունը. վարչական փոխօգնությունը, փոխադարձ իրավական օգնությունը,

- իրավաբանական անձանց հիմնական հատկորոշիչների և իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու և փոխանակելու նպատակով իրականացվող միջազգային համագործակցության տեսակները,

- ֆինանսական հետախուզության տվյալների և այլ վերաբերելի տեղեկությունների օգտագործումը փողերի լվացման, նախորդող հանցագործությունների նախաքննության ընթացքում ապացույցների հավաքման ու հանցավոր ճանապարհով ստացած միջոցների հետապնդման նպատակով,

- փողերի լվացման գործերի հայտնաբերման և նախաքննության, այդ թվում՝ զուգահեռ ֆինանսական քննության իրականացման, Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման, ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման ռիսկերի ազգային գնահատման մեթոդաբանություն,

- ակտիվների վերականգնում. հանցավոր գույքի բռնագրավումը մեղադրական դատավճռի հիման վրա կամ այլ մեխանիզմների օգտագործմամբ:

4. IAC-004-26. Հաշվապահական հաշվառման կամ իրավաբանական անձի կարգավիճակը և գործունեությունը կարգավորող ոլորտներ.

Դասընթացի նպատակն է ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց պարզաբանել հաշվապահական հաշվառման կամ իրավաբանական անձի կարգավիճակը և գործունեությունը կարգավորող ոլորտների արդի հարցերը: Գործնական գիտելիքներ տրամադրել իրավաբանական անձանց տեսակների, պատասխանատվության ու լուծարման, հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների ու ֆինանսական քննությունների վերաբերյալ:

Դասընթացը ներառում է՝

- իրավաբանական անձանց տեսակներն ու պատասխանատվությունը,
- իրավաբանական անձի լուծարումը,
- սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գույքում մասնակցի բաժնեմասի վրա բռնագանձում տարածելը,
- հաշվապահական հաշվառման վարման հիմնական կանոնները,
- սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը,
- ֆինանսական հաշվետվություններ կազմելուն ներկայացվող պահանջները,
- ֆինանսական քննություն:

5. IAC-005-26. Քրեագիտություն.

Դասընթացի նպատակն է կատարելագործել ունկնդիրների գիտելիքները կոնկրետ քննչական գործողությունների կատարման և տակտիկական հմտությունների կիրառման ոլորտում: Դասընթացը ներառում է նաև կոռուպցիոն հանցագործությունների առանձին տեսակների քննության մեթոդիկան:

Դասընթացը ներառում է՝

- քննչական վարկածներ, դրանց դասակարգումը և դրանց ստուգմանն ուղղված գործողություններ,
- փաստաթղթերի քննչական զննության խնդիրները, կատարման կարգը,
- հարցաքննության մեթոդները և հաղորդակցության կառավարումը,
- մեղադրյալի հարցաքննության առանձնահատկությունները, տակտիկական հնարքները,
- խուզարկության և առգրավման տակտիկական մարտավարական առանձնահատկությունները,
- դեպքի վայրի զննության, ճանաչման ներկայացնելու, հարցաքննության և այլ քննչական գործողությունների կատարման տակտիկային վերաբերող հարցեր,
- փաստաթղթերի տեխնիկական հետազոտության վերաբերյալ փորձաքննությունների նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը,
- փորձագիտական գործունեությունը և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները,
- հանցագործությունների քննության կազմակերպական և ղեկավարման առանձնահատկությունները,
- կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկան,
- կաշառք ստանալու և տալու քննության մեթոդիկան,
- համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարվող կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկան,
- փողերի լվացման քննության մեթոդիկան,
- ընտրական ոլորտի կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկան:

6. IAC-006-26. Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտեր, վերաբերելի նախադեպային որոշումներ.

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ իրավական նոր դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և կարողություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի վերաբերյալ,
- արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները,

- ՄԻԵԿ-ի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ անձին սեփականությունից զրկելու իրավակարգավորումները: